

լցուեցաւ արաբիոյ եւ հնդկաց անուշահոտ խնկերով, եւ եռոտանին իբրեւ թէ խնկաման կամ բուրվառ մը լինէր՝ դուրս կը փչէր զմայլեցուցիչ մուխ մը, որ զարմանալի ազդեցութեամբ այդ մարդուն երկընթէ շիղերը կակուղ ոսկուոյ սկսաւ դարձնել: Դուռ կը փնտրէր Յովնան, եւ ահա չէր կարող նշմարել նաեւ այն դուռը ուսկից ինք ներս մտեր էր. եւ իր սուր աչքերը շփոթեցան, վասնզի մուտքը կարող չէր նշմարել, եւ իրօք կը տեսներ թէ բանտի մը մէջ էր բայց փառաւոր բանտի մէջ:

Հագիւ թէ այս խորհրդածութիւնը մտքէն անցաւ եւ ահա Վահագնի եւ Աստղկան պղնձէ պատուանդաններուն անյայտ դռները թացուեցան եւ երգեցիկ քրմաց ու քրմուհաց բազմութիւն մը զոյգ-զոյգ սկսան դուրս ելնել եւ արձաններուն առջեւ շարուիլ. իրենց հարուստ եւ ճոխ ոսկեթել եւ նկարէն զգեստները, հաճոյական էին աչաց, եւ երբ Յովնան անոնց մանրամասն դիտողութեան զբաղած էր՝ ահա Անահտայ պատուանդանին դռնէն դուրս ելան մեծ քրմապետը եւ մեծ քրմուհին եւ երգերը լռեցին: Մեր լեռնցին քրմապետը մէկէն ճանչեց թեպէտ զգեստն երուն պերճութենէն փոխուած՝ բայց Նոյն ծերն էր, որ զինքն հոն բերել էր. իսկ քրմուհին երիտասարդ եւ շատ գեղեցիկ կին մ'էր, որ երբ եռոտանուոյն առջեւ կանգնեցաւ, թալուկ եկաւ երեսին: Նոյն վայրկենին, երբ երգերն լռեցին եւ եղեգեայ սրինգներ սկսան փափուկ եւ տխուր երաժշտութիւն մը հնչեցնել, որ մտիկ ընողին հեշտալի եթէ չէր գալ, վայրկենէ մը վերջը շատ ազդու եւ սրտաճմլիկ բերկրութիւն մը կը բերէր անձին: Քրմապետը այն ատեն ձեռք տուաւ եւ հրաւիրեց քրմուհին՝ որ անցնի Նստի ոսկի եռոտանուոյն վրայ, եւ ինք շրջապատեալ իր խումբէն՝ կանգնեցաւ իւր աստուածութեանց առաջ թելերը տարածելով եւ անձայն աղօթելով, հագիւ թէ շրթուքը կը շարժէին: Եւ ահա քանի մը ռոպէ չեղած ամէն աչք, որ եռոտանուոյն պշուցեալ էին՝ կը տեսնէին փոքրիկ, ջղային ցնցմունքներ մեծ քրմուհուոյն վրայ, անոնց յաջորդեց վիճակ մը, որ իբրեւ թէ մարմարէ արձան յեղափոխեց այդ եռոտանուոյն վրայ Նստողը, մինչեւ որ աչքերը սկսան բացուիլ անսովոր եւ սեւեռ նայուածքով. ան ատեն քրմապետին բերին դիրք մը, որուն թերթերը արծաթեայ բարակ